ՄԻՆԱՍ ԲԱԼԱԲԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՐԳԵՐ

Նոր Նախիջևանի պատմության մեջ մեծ տեղ է բռնում Մինաս Բալաբանյանը, որը 1888 թվականից մինչև 1913 թվականի վերջը փոքր ընդհատումներով վարեց քաղաքագլխի պաշտոնը։ Նրա օրոք սալահատակվեց ամբողջ քաղաքը, շինվեցին քաղաքային ջրմուղը, էլեկտրականությունը, շուկան, աղջիկների և տղաների գիմնազիաները, Կոկոյան գիմնազիան, Հռիփսիմյան ուսումնարանը, նա տնկել տվեց քաղաքի հյուսիսային կողմում 75 դեսյատին անտառակը, նրա օրով եկավ տրամվայը, շինվեց քաղաքային թատրոնը և շատ ուրիշ արժեքավոր շենքեր։ Բալաբանյանը մեծ զարկ տվեց քաղաքի տնտեսության զարգացմանը։ Նրա օրով շինվեց քաղաքային սպանդանոցը։ Բալաբանյանի ջանքերով հիմնվեց հայոց աղքատախնամ ընկերության Ռոստովի հասութաբեր մեծ տունը, որի եկամտով պահվում էր որբանոց, անկելանոց և այլն։

Նրա օրով քաղաքը կառուցեց Եկատերինե երկրորդի հուշարձանը, որը կանգնած էր մայր եկեղեցու առաջ մեջքով դեպի եկեղեցին։ Այդ առիթով շատ հայեր անբավական էին և մեղադրում էին Բալաբանյանին։ Բալաբանյանին է վերաբերում անցյալ դարի իննսունական թվականներին հորինված «Ա՛յ քաղաք, պայծառ քաղաք» երգը։

ԳՈՎԵԼԻ ՔԱՂԱՔ

Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք,
Քաղաքին քենարը, սելվի ձառեր,
Սելվի ձառեր, վաշդի ձառեր։

Քաղաք մգանք՝ բաձրը գուներ,
Թուլայե գուներ, դեսոք գուներ.
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Նեսեն-դուսեն քիռիիչե բաղեր,
Բոյա քըսած բաձրը գուներ.
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Սոխախները քարվաձք արաձ,
Քեսմե քարը սըրայով շարաձ,
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Ժեք ծի լըձաձ կոնկան կուկար,
Մեր մալիեն շաղ եդ գըմնար.
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Սուբ Գևորգին մաղաղ արինք,
Եդևի ոդքը դերբային դվինք,
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Ցալին իշանք, շաղ զավոդ գար,
Վառաձներն ալ սալթը փաղ էր.
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Բազար էլանք, ժուլիք շաղ գար,
Եդ էգանք, դագերուս գիզը չկար.
Ա՛յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Լուսավորչի սոխախը էլլանք,
Քաթեռնային սուրեթը գեսանք,
Էրեսը դերի Ռոստով արաձ,
Լուսավորչին էդև արաձ։
Շաղ աղեդ է, շաղ դեսոք է,
Ամա մեգ պան շաղ ամոթ է,
Ինչի ժամին էդև արիլ է,
Ինչի մեղմեն խոովիլ է,
Մինաս աղա, Մինաս աղա[1],

---

1 Մինաս աղան ժամանակվա քաղաքագլուխ Մինաս Բալաբանյանն է։

Դուն շուդ արա մեզի ասա,
Գասին ադպես դուն արիլ իս,
Գասին ասպես դուն դրիլ իս,
Ա՜յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք։

Սուր Գևորգի քոփուրեն անցանք,
Անգից անքով բան չիմացանք,
Շիդագն ասած ես հոգնեցա,
Ես հոգնեցա, պան չիմացա։
Ա՜յ քաղաք, գովելի քաղաք,
Բայձառ քաղաք, գովելի քաղաք[2]։

---

2 Այս երգի նոտագրված տարբերակը տե՛ս սույն գրքում, Մ. Լյուլեճյանի ժողովածուն։